ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 դեկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

176
(3207)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲԼՈԳԵՐՆ ՈՒ «ՇԻՇ ԲՌՆՈՂԸ» ՄԵՐԺՎԵՑԻՆ ՔՊ-Ի ԿՈՂՄԻՑ

ԱԺ ՔՊ խմբակցության ամենասկանդալային պատգամավորներից Հայկ Սարգսյանը, ըստ «Հրապարակ» օրաթերթի, չի ընտրվել որպես պատգամավորության թեկնածու:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական աղբյուրներից պարզեց, որ ՔՊ վարչությունը նրան մերժել է. միաձայն գրեթե 20 հոգանոց վարչությունում ընդամենը 3-4 հոգի է կողմ քվեարկել նրա թեկնածությանը:

Մերժման պատճառները, սակայն, շատ ավելի խորքային են: Սարգսյանը լուրջ հակասությունների մեջ էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ՝ նրան մեղադրելով կոռուպցիոն հակումների ունենալու համար, նշելով, որ նա հովանավորում է խաղատնային բիզնեսները: Բացի դրանից, իշխանական աղբյուրների փոխանցմամբ, Հայկ Սարգսյանն ու նրա եղբայր Նաիրի Սարգսյանը հավակնություններ ունեին զբաղեցնելու Տիգրան Ավինյանի տեղը՝ Երեւանում առաջիկա քաղաքապետի ընտրությունների համատեքստում:

«Ժողովուրդ» օրաթերթը իր աղբյուրներից տեղեկացավ, որ չնայած փոխադարձ սառը հարաբերություններին՝ Ալեն Սիմոնյանն ու Տիգրան Ավինյանը կոալիցիա են կազմել, որպեսզի կասեցնեն Հայկ Սարգսյանի առաջընթացը ՔՊ-ում:

Արդյունքում, մարդը, որը հեղափոխության օրերին Նիկոլ Փաշինյանի կողքին էր՝ բառացիորեն «ջրի շիշը բռնողը», այսօր մերժված է հարազատ կուսակցության կողմից: Այս տարվա գարնանն էլ Ալեն Սիմոնյանի «ջանքերով» նա կուսակցական նկատողություն էր ստացել:

ՔՊ-ում քննարկել են, թե Հայկ Սարգսյանը եւ եղբայր Նաիրի Սարգսյանը, որը քաղաքային հարցերով բլոգեր է դարձել, մտադիր էին Երեւանի առաջիկա քաղաքապետի ընտրություններում դառնալ ՔՊ-ի թեկնածուն, դրա համար նրանց ընթացքը կասեցվել է՝ մրցակցային տրամաբանությունից ելնելով:



Երեկ Սեւանի ափին բեմադրված «շոու ծրագիրը», որը իշխանության հերթական ցուցամոլության դրսեւորումն էր, թե իբր տեսեք՝ մենք մեր շարքերում գտնվող Սասուն Միքայելյանին պատկանող գույքն էլ ենք ապօրինի գույքի անվան տակ հողին հավասարեցնում, փլչեց: Բայց հետաքրքիրն այն է, որ նշված ապօրինի գույքը մաշված, երկար ժամանակ չօգտագործված, հալից ընկած 3-4 կառույցներ էին, որտեղ անգամ որպես հյուր մտնելն էլ էր անհնար. դղյակները եւ 3800 շինությունները իրենց տեղում են: Իսկ ով էր այս «շոուի» գլխավոր դերակատարը. Գեղարքունիքի մարզի դատախազ Գագիկ Այվազյանը, ով ավելի լուրջ վարույթներով է անցել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2023 թվականին ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ուսումնասիրելով դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող Գեղարքունիքի մարզի դատախազ Այվազյանի վերաբերյալ տեղեկությունները, իրականացրել էր քննություն: ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ Գագիկ Այվազյանը 2011 թվականի մարտի 4-ից մինչեւ 2023 թվականի մարտի 17-ը հանդիսացել է «Կարանգա» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր եւ գործադիր մարմնի ղեկավար: Գագիկ Այվազյանը, որպես ընկերության տնօրեն, 2020 թվականի փետրվարի 11-ին ՊԵԿ դիմում էր ներկայացրել՝ ընկերության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում Արմենակ Այվազյանին որպես առցանց լիազոր գրանցելու վերաբերյալ: Գագիկ Այվազյանի 2019, 2020, 2021 թվականի տարեկան հայտարարագրերում ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցության, գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու, ինչպես նաեւ իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Կառավարության նիստում հայտարարեց, որ Սեւանա լճի տարածքում գտնվող ապօրինի շինություններից մի քանիսը պետք է հողին հավասարեցվեն: Հայտարարությունը հնչեց վճռական, սակայն դրան հետեւած գործողությունները կրկին հարցեր առաջացրին: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը տարիներ առաջ գրել էր, որ Սեւանա լճի եւ հարակից տարածքներում առկա են շուրջ 3800 ապօրինի եւ քանդման ենթակա շենք-շինություններ: Սակայն երեկ իրականում քանդվեցին միայն ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանին պատկանող մի քանի հնամաշ տնակ՝ մետաղական, ակնհայտորեն անպիտան կառույցներ: Մինչդեռ, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրների, Աննա Վարդապետյանի կողմից հիշատակված մյուս «խոշոր» օբյեկտները՝ ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի առանձնատունը եւ ՀՖՖ նախկին նախագահ Ռուբեն Հայրապետյանին պատկանող «Հարսնաքար» համալիրը չեն քանդվելու ամբողջությամբ:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Ազգային ժողովը երեկ ընդունեց «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը. կողմ՝ 65, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 20: Ըստ ընդունված փաթեթի՝ 24-ամսյա պարտադիր ծառայությունը կդառնա 18-ամսյա: Միաժամանակ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ԱԺ-ում ներկայացրեց պահեստազորայինների վարժական հավաքների վերաբերյալ թվերը. 2025-ին վարժական հավաքներին ներգրավվել է 16 000 պահեստազորային, իսկ 2026-ին նախատեսվում է ներգրավել 20 000: Սա նշանակում է՝ հաջորդ տարի պլանավորվող ներգրավումը ավելանալու է 4 000-ով (մոտ +25%)՝ 2025-ի ցուցանիշի համեմատ: Այսինքն՝ նախընտրական գովազդի շրջանակում ժամկետային զինծառայության ժամկետը կրճատվեց կես տարով, բայց մյուս բոլոր ՀՀ քաղաքացիները՝ ավելի մեծ թվով, վարժական հավաքներին ստիպված կլինեն մասնակցել: Մասնագետներն այս կրճատումը համարում են բանակի քանդման հերթական քայլ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԻՄ ՀԱՆԴԵՊ ՏԱՐՎՈՂ «ՍԵՎ PR-Ը» ԻՆՁ ՀԵՏ ԿԱՊ ՉՈՒՆԻ», ՎԱՆԵՑՅԱՆ

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում այս անգամ մեր զրուցակիցն է «Հայրենիք» կուսակցության ղեկավար Արթուր Վանեցյանը, ում հետ զրուցել ենք նրա նկատմամբ հանրության շրջանում ձեւավորված ընկալումների, գործունեության եւ նպատակների մասին:

-Պարոն Վանեցյան, հանրության շրջանում Ձեզ տարբեր կերպ են ընկալում՝ որպես ԱԱԾ-ի նախկին տնօրեն, այնուհետեւ՝ քաղաքական գործիչ: Ձեր կարծիքով՝ հանրությունը կարողացա՞վ ճանաչել Արթուր Վանեցյան մարդուն:

-Չեմ կարծում, որ ամբողջովին ճանաչել են Արթուր Վանեցյան մարդուն, որովհետեւ հանրային կյանքը, հատկապես վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունները, լիարժեք հնարավորություն չեն տալիս քեզ պահել այնպես, ինչպես քեզ պահում ես ընկերական միջավայրում կամ ընտանիքում: Այնուամենայնիվ, որոշակի ընկալումներ հանրային դաշտում ձեւավորվել են: Չեմ կարող ասել՝ դրանք բացասական են, թե դրական. ժողովուրդը կտա իր գնահատականը: Սակայն կարծում եմ՝ ցավոք սրտի, ինձ ամբողջությամբ չեն ճանաչել՝ որպես մարդ;

-Ի՞նչն է դրա պատճառն ըստ Ձեզ:

-Այն արհավիրքները, որոնք մեր երկրի գլխին եկան, ցավոք, այնպիսի իրավիճակ ստեղծեցին, որ դու չես կարողանում խոսել դրական բաների մասին, այնպիսի թեմաների, որոնք հաճելի են հանրության ականջին: Դու ստիպված ես իրավիճակային խոսք ասել, գործողություններ իրականացնել, որոնք շատ դեպքերում հանրային ընկալման մեջ կապվում են բացասականի հետ, քանի որ մշտապես մատնանշում ես, թե ինչ են անում գործող իշխանությունները եւ ինչպիսի խնդիրների առաջ են կանգնեցրել երկիրը: Ստացվում է մի իրավիճակ, երբ դու խոսում ես, բողոքում ես, բարձրաձայնում ես վատ երեւույթների մասին եւ չես կարողանում ասել այն ամենը, ինչ կցանկանայիր, ինչպես նաեւ չես կարողանում հանրությանը ցույց տալ քո այլ կողմը՝ ոչ թե որպես քաղաքական գործիչ կամ ԱԱԾ-ի նախկին աշխատակից, այլ որպես սովորական մարդ, որը շփվում է այլ մարդկանց հետ: Բայց կարծում եմ՝ այդ բացը անպայման կլրացվի:

-Ինչպե՞ս եք պատկերացնում այդ բացի լրացումը, պարոն Վանեցյան: Իշխանությունը բավական ակտիվ հակաքարոզ է իրականացնում Ձեր դեմ, հատկապես վերջին շրջանում: Ի՞նչ պետք է անեք Դուք, որպեսզի հասկանան, որ Դուք պարզապես քաղաքական գործիչ եք, որը եկել է դրական փոփոխություններ իրականացնելու:

-Հանրային ընկալման մեջ այդ հակաքարոզը, իհարկե, բացասական ազդեցություն ունի: Լինում են դեպքեր, երբ անգամ իմ հարազատները, նույնիսկ ընտանիքի անդամները, իշխանամետ լրատվամիջոցների տարածած անհեթեթ լուրեր են կարդում ու զարմացած հարցնում՝ ինչ է սա: Պետք է ազնիվ լինենք. իշխանությունների կողմից տարվող այդ հակաքրոզչությունը, ի տարբերություն շատ այլ ոլորտների, բավականին արդյունավետ է, հատկապես քաղաքական հակառակորդների նկատմամբ: Կարեւոր է, որ հանրությունը կարողանա տարբերել կեղծ լուրը իրականից: Իմ հանդեպ իրականացվող հակաքարոզչությունը մեծ չափերի է հասել, եւ դրա նպատակը մեկն է՝ ինձ մշտապես ներքաշել մի օրակարգի մեջ, որտեղ ես ստիպված կլինեմ հերքել ինչ-որ բաներ եւ արդարանալ: Ես արդարանալու ոչինչ չունեմ. չեմ կատարել ճակատագրական սխալներ, որոնց համար պետք է ամաչեմ: Իսկ ընդհանրապես սխալներ բոլորն են գործում: Ուստի ցանկանում եմ ընդգծել, որ իմ հանդեպ տարվող «սեւ PR»-ը որեւէ կապ չունի իմ իրական գործունեության եւ անձի հետ:

Հարցազրույցի շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի վաղվա՝ 3208 համարում:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՄԻ ՁԵՌՔՈՎ «ԶՍՊԱՇԱՊԻԿ» Է ՀԱԳՑՆՈՒՄ

Գյումրու կենտրոնական հրապարակում այս օրերին կանգնած «տոնածառը» ավելի շատ հիշեցնում է մետաղական կմախք. քաղաքը կարծես կես ճանապարհին կանգ է առել՝ բառացի ու փոխաբերական իմաստով: Բայց եթե ինչ-որ մեկը հիմա փորձում է քաղաքային իշխանություններին «ամոթանք տալ», թե «ինչու չեք հասցրել ամբողջությամբ դնել», թող նախ նայի՝ ո՞վ է Գյումրու կառավարման բանալիները տարել դատարանների միջանցքներ:

Պաշտոնական լուրերով՝ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը ձերբակալվել է հոկտեմբերի 20-ին, իսկ հաջորդ օրը հակակոռուպցիոն դատարանը նրան երկու ամիս կալանավորելու որոշում է կայացրել: Քաղաքապետի կալանավորումից հետո, օրենքով, քաղաքապետի պարտականությունները անցել են առաջին տեղակալին՝ Ավետիս Առաքելյանին: Եվ հենց այստեղ է «ժանրի» գլխավոր հեգնանքը. իշխանական ՔՊ-ն մի ձեռքով քաղաքական դաշտում «զսպաշապիկ» է հագցնում համայնքին, մյուս ձեռքով՝ բողոքում, թե քաղաքը չի աշխատում:

Այս ֆոնին Գյումրու տոնածառն արդեն պարզապես ամանորյա ատրիբուտ չէ. այն ՏԻՄ-ի վիճակի ցուցափեղկն է:

Երբ նույն ՔՊ-ն բարձրաձայն «մունաթ» է գալիս, թե «այս ինչ վիճակ է», պետք է առաջինն իրենց քննադատի՝ քաղաքի կառավարումը կոլապսի վերածելու համար:

Գյումրին տոնածառից առավել այսօր կարիք ունի մեկ բանի, որ քաղաքական հաշվեհարդարի գինը չվճարեն գյումրեցիները, ու հատկապես՝ երեխաները: Տոնածառը կարելի է մեկ-երկու օրում լույսերով պատել: Իսկ կիսակաթվածահար արված համայնքային ինքնակառավարումը հետո տարիներով է «վերանորոգվելու»:

ԿՈՇՏ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂՈՒ» ՄԱՍԻՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը չի մեկնաբանում Իրանի գերագույն առաջնորդի միջազգային հարցերով խորհրդականի՝ Իրանում ՀՀ դեսպանի հետ հանդիպմանը Թրամփի ուղու վերաբերյալ արված հայտարարությունը:

Ըստ իրանական կողմի հաղորդագրության՝ Ալի Աքբար Վելայաթին հայտարարել է, որ «Թրամփի ծրագիրը» գործնականում նույնն է, ինչ «Զանգեզուրի միջանցք» նախագիծը, պարզապես այլ անվան տակ, այդ իսկ պատճառով Իրանը կտրականապես դեմ է դրան: Իրանցի բարձրաստիճան պաշտոնյայի խոսքով՝ այդ ծրագիրն այժմ առաջ է մղվում ամերիկյան ընկերությունների՝ Հայաստան մուտք գործելու միջոցով:

«Իրանը ի սկզբանե դեմ է եղել «Զանգեզուրի միջանցքին», քանի որ Թեհրանը մերժում է տարածաշրջանային սահմանների ցանկացած փոփոխություն: Միջանցքը կարող է հնարավորություն տալ ՆԱՏՕ-ին ներկայություն ունենալ Իրանի հյուսիսում՝ անվտանգային լուրջ ռիսկեր ստեղծելով Իրանի հյուսիսում եւ Ռուսաստանի հարավում: Փորձը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ն սկզբում թվացյալ տնտեսական նախագծերով թափանցում է զգայուն տարածաշրջաններ, սակայն աստիճանաբար այդ ներկայությունն ընդլայնվում է՝ ներառելով ռազմական եւ անվտանգային բաղադրիչներ»,- իրանական լրատվամիջոցների փոխանցմամբ ասել է Վելայաթին:

Իրանում ՀՀ դեսպանության տարածած հաղորդագրության համաձայն՝ դեսպան Գրիգոր Հակոբյանը հայտնել է Վելայաթիին, որ «TRIPP» ուղին կյանքի է կոչվելու պետությունների տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, իրավազորության եւ փոխադարձության սկզբունքների հիման վրա եւ ստեղծելու է լայն հնարավորություններ տարածաշրջանի փոխկապակցվածության ու տնտեսական զարգացման համար: «ՀՀ դեսպանը վերահաստատել է, որ Երեւանը բարձր է գնահատում վերոնշյալ սկզբունքներն անվերապահորեն հարգելու վերաբերյալ Թեհրանի աներկբա դիրքորոշումը եւ փոխադարձաբար հաշվի է առնում բարեկամ Իրանի անվտանգային ու քաղաքական զգայունությունները»,- նշված է դեսպանության հաղորդագրությունում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Փաստաբան Արամ Վարդեւանյանը գրում է. «2025 թվականի հոկտեմբերի 16-ին Հակակոռուպցիոն դատարանը Սամվել Կարապետյանի ապօրինի կալանքը երկարաձգել էր մեկ ամսով: Դատարանը փաստացի արձանագրել էր, որ քրեական հետապնդման ժամկետների խնդիր է առաջ գալիս: Քննչական մարմինը եւ Դատախազությունը ուղիղ անտեսեցին Դատարանի որոշումը: Ի դեպ այդ որոշմանը նախորդող եւ հաջորդող ժամանակահատվածում գրավոր միջնորդություններով հստակ արձանագրել էինք այդ խնդիրը, հստակ պահանջել ենք դադարեցնել գործի ձգձգումը, դադարեցնել առնվազն նախաքննական գաղտնիքով պաշտպանվելը մեր դեմ: Նույնիսկ միջնորդել էինք վարույթից մաս անջատել եւ աբսուրդային կոչի դրվագը ուղարկել դատարան, կամ հարգել իրավունքը ու կարճել:

2025 թվականի դեկտեմբերի 11-ին Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով մեր բողոքում արձանագրված պահանջներից մեկը, հստակ նշել է, որ այլեւս Սամվել Կարապետյանի քրեական վարույթի ձգձգումը (ժամկետները)՝ խնդրահարույց է եվ հանգեցնում է մարդու հիմնարար իրավունքների խախտման:

Նույն Վերաքննիչ դատարանը, որն այլեւս անհերքելի քաղաքական հետապնդման պայմաններում մեր բողոքը չի բավարարել, այսպիսի իրավական դիրքորոշում է արձանագրել: Ցանկանում եմ հայտնել նաեւ, որ Քննչական մարմնին ներկայացվել են նախաքննության ձգձգումը կանխող, ակտիվ գործողություններ կատարելու պահանջով միջնորդություններ, որոնք մերժվել են: Հետեւաբար, Քննչական մարմինն ակտիվ գործողություններ չի կատարում, հակառակը 53 քննիչներից բաղկացած խումբը վճռական անգործության մեջ է՝ չնայած շուրջ վեց ամիս է կալանավորված է Սամվել Կարապետյանը, իսկ միակ գործողությունը, որ կատարել են, հերթական «աննախադեպ» գործողությունն էր, ըստ որի՝ խուզարկել են լեզվաբան-փորձագետի տունը, ում դիրքորոշմամբ արձանագրվել էր, որ Սամվել Կարապետյանի՝ Մայր Աթոռը պաշտպանող խոսքում կոչ չկա:

Ազատություն բոլոր քաղբանտարկյալներին…»:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են հանրային կառավարման բարեփոխումների ուղղությամբ 2025թ. իրականացված աշխատանքները:

Նախքան Կառավարության կողմից իրականացված աշխատանքների ներկայացումը, անդրադարձ է կատարվել ՏՀԶԿ/ԵՄ ՍԻԳՄԱ համատեղ նախաձեռնության զեկույցի արդյունքներին, որը հրապարակվել է 2025թ. դեկտեմբերի 9-ին եւ գնահատել է Հայաստանի հանրային կառավարման համակարգը: Նշվել է, որ իրականացված գնահատումը հիմք կդառնա հանրային կառավարման բարեփոխումների նոր ռազմավարության մշակման համար:

Ներկայացվել է, որ գնահատում իրականացվել է վեց հիմնական ուղղություններով, այդ թվում՝ ռազմավարություն, քաղաքականություններ, մարդկային ռեսուրսներ, հաշվետվողականություն, ծառայություններ եւ թվայնացում, հանրային ֆինանսների կառավարում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՓՈՔՐ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐ

Այգեպարը Բերդ քաղաքից մոտ 7 կմ հեռավորությամբ է գտնվում: Այն հիմնվել է 1937 թվականին՝ որպես ծխախոտի ֆերմետացիոն գործարանին կից բնակավայր: 1964-ին բնակավայրը անվանվել է Այգեպար: Խորհրդային տարիներին Այգեպարը հայտնի էր ծխախոտի ֆերմետացիոն գործարանով եւ գինու գործարանով: Հայաստանի անկախացումից հետո դրանք երկար տարիներ է անգործության են մատնված: Սակայն նախկինում բանվորական ավան Այգեպարում արտադրական գործընթացը այժմ փոքր-ինչ վերականգնվում է: Նոյեմբերի 13-ին Բերդ համայնքի ավագանին միաձայն քվեարկությամբ, 10 կողմ ձայնով որոշել է համաձայնություն տալ «Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող, Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Այգեպար 1-ին փողոց 8/4 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի N1 սենյակը՝ 213,32 քմ, N2 սենյակը 5.7 ք.մ, N3 սենյակը՝ 5.7 քմ, N4 սենյակը՝ 18.29 քմ, N5 սենյակը՝ 18.73 քմ, ընդհանուր՝ 261,74 քմ մակերեսով, առանց մրցույթի, վարձակալությամբ, ամսական 30 000 ՀՀ դրամ վարձավճարով, տարեկան 360 000 ՀՀ դրամ վարձավճարով, 5 տարի ժամկետով տրամադրել «Բեստ կոմֆորտ» ՍՊԸ-ին՝ արտադրական գործունեություն ծավալելու համար»: Այգեպար բնակավայրի նախկին վարչական ղեկավար, Բերդի համայնքապետարանի մասնագետ Արկադի Յամուկյանին մեր թղթակիցը հարցրել է, թե «Բեստ կոմֆորտ» ՍՊԸ-ն Այգեպարում արտադրական ինչ գործունեություն է իրականացնելու: Յամուկյանը հայտնեց, որ այդ ընկերությունն Այգեպարում արտադրելու է բաղնիքներում (բնակարանների) տեղադրվող չորանոցներ: Նա ասաց, որ Այգեպարում գտնվող, վերոհիշյալ վարչական շենքում նախկինում մակարոնեղենի արտադրամաս է գործել, որը, սակայն, դադարեցրել է գործունեությունը: Նրա խոսքերով՝ առաջիկայում Այգեպարում նաեւ մոմերի արտադրություն կսկսվի: Սահմանամերձ, մոտ 500 բնակիչ ունեցող Այգեպարում փոքր արտադրամասերի գործունեությունը կապահովի որոշակի թվով աշխատատեղեր, ինչն էլ որոշակիորեն կկանխի արտագաղթը Այգեպար բնակավայրից:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Իջեւանի համայնքապետ Արթուր Ճաղարյանը նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին որոշումներ է ընդունել տասնյակ քաղաքացիների գույքահարկի գանձման պահանջ ներկայացնելու մասին: Այդ որոշումները վերաբերում են 2019-2025թթ. ընկած ժամանակահատվածում չվճարված գույքահարկին եւ այդ պատճառով առաջացած տույժերին: Այդ գումարների չափերը յուրաքանչյուր դեպքում կազմում են հարյուր հազարավոր դրամներ: Նշված բնակիչները տուգանքի որոշումն ստանալու պահից որոշակի ժամկետում պարտավոր են տուգանքի գումարը մուծել համայնքապետարանի գանձապետական հաշվին, որոշման պահանջները չկատարելու դեպքում՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՏԵԼ Է 13.000-Ը

ՆԱԽԿԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ՄԻԱՑԵԼ Է «ՄԵՐ ՁԵՎՈՎ» ՇԱՐԺՄԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ ԿԳՄՍ նախկին փոխնախարար Գրիշա Թամրազյանը միացել է «Մեր ձեւով» շարժմանը:

Մենք փորձեցինք տեղեկությունը ճշտել շարժման մամուլի պատասխանատու Մարիաննա Ղահրամանյանից, ով հաստատեց մեր տեղեկությունները:

«Այո՛, Գրիշա Թամրազյանը միացել է «Մեր ձեւով» ժողովրդական շարժմանը: Դուք գիտեք, որ մեր շարժումը Հայաստանի ամենաարագ զարգացող շարժումն է, եւ ամեն օր մեզ են միանում հարյուրավոր քաղաքացիներ, որոնք կիսում են մեր գաղափարները: Նրանց թվում են նաեւ պրոֆեսիոնալներ տարբեր ոլորտներից: Շարժման մասնակիցների թիվը հատել է 13 հազարը»,-նշեց մեր զրուցակիցը:

Ի դեպ, հիշեցնենք, որ Գրիշա Թամրազյանը այն փոխնախարարն էր, որ ազատման դիմում էր գրել աշխատանքից հեռանալու ու նշել. «Կյանքիս ողջ գիտակից հատվածը պայքարել եմ հանուն արդարության եւ այն սկզբունքների, որոնց երբեք չեմ դավաճանել: Հենց այդ սկզբունքներն են ինձ ստիպել գնալ այս քայլին, որովհետեւ համոզված եմ, որ մեր պայքարը եղել է ոչ թե ընդդեմ, այլ՝ հանուն: Հանուն մեր ուժեղ եւ ազգային արժեքների վրա հիմնված պետություն կայացնելուն, հանուն արդարության, հանուն մեր քաղաքացիների արժանապատիվ կյանքի, հանուն որակյալ եւ ազգային արժեքների վրա հիմնված կրթության, հանուն մրցակցային եւ հաշխարհային մասշտաբի սպորտ ունենալուն:

Չեմ կարծում, որ այդ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ էր հրաժարվել այն ամենից ինչը եղել է նախկինում, այդ թվում նաեւ ձեռքբերումներից, որոնք իրականացել են վերջին 29 տարիների ընթացքում մեր հայրենակիցներից շատերի ջանքերով: Ինձ համար հայ ժողովրդի պատմությունը չի սկսվում 2018թ-ից:

Բայց իմ տեսակը հանձնվողներից չէ եւ պայքարը հանուն այն արժեքների, որոնք ինձ համար անփոփոխ են, շարունակվելու է. սա տեսակի պայքար է»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ

«Ադրբեջանի տարածքով Հայաստան բերվող ապրանքի նոր խմբաքանակ կա, ճանապարհին է»: Այս մասին դեկտեմբերի 15-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

«Շարունակվում է ներմուծումը, նոր խմբաքանակներ կան՝ ճանապարհին են, շուտով կգան», - ասաց նա:

Պապոյանի խոսքով՝ Ադրբեջանով եկած ցորենը 4-րդ կարգի չէ, այլ 3-րդ կարգի ցորեն է եղել, բոլորն էլ կերել են, նաեւ ինքը, քանի որ բերած խմբաքանակն ընդամենը մի քանի օրվա ցորեն է եղել:

Նա նշեց, որ որ նոր եկող ցորենը 3-րդ կամ 2-րդ կարգի է:

«Ադրբեջանական նավթամթերքի Հայաստան ներկրման մասին որեւէ նոր բան չկա: Հարցրեք ընկերություններին՝ թող նրանք հաստատեն՝ կա՞ նման բան, թե՞ ոչ»,-պատասխանելով ադրբեջանական նավթամթերք ներմուծելու մասին հարցին՝ ասաց էկոնոմիկայի նախարարը:

Նա հայտարարեց, որ Ադրբեջանը դեռ ՀՀ տարածքով վառելիք չի ներմուծում, այլ սպասում է ամբողջական կարգավորման:

Հիշեցնենք, որ ավելի վաղ տեղեկացրել էինք՝ Ռուսաստանից ցորենի առաջին խմբաքանակը Ադրբեջանի տարածքով հասել է Հայաստան: Իսկ ավելի ուշ հայտնի էր դարձել, որ Ղազախական ցորենով բեռնված գնացքը ժամանել է Հայաստան՝ անցնելով Ղազախստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքով:

ՌՈՒԲԻՈՅԻ ՈՒ ԱԾ–ՇԱՅԲԱՆԻԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Միացյալ Նահանգների պետքարտուղար Մարկո Ռուբիոն հեռախոսազրույց է ունեցել Սիրիայի արտաքին գործերի նախարար Ասաադ աշ-Շայբանիի հետ:

Այս մասին հայտնում է ԱՄՆ պետդեպարտամենտը՝ ներկայացնելով հեռախոսազրույցի մանրամասները:

Նշվում է, որ զրուցակիցները քննարկել են Սիրիայում ԱՄՆ զինծառայողների դեմ ահաբեկչական հարձակումը, որի հետեւանքով զոհվել են երկու ամերիկացի զինվորներ եւ մեկ քաղաքացիական թարգմանիչ:

Պետդեպարտամենտի փոխանցմամբ՝ Սիրիայի ԱԳ նախարար ալ-Շայբանին ցավակցություն է հայտնել եւ վերահաստատել Դամասկոսի հանձնառությունը՝ քայքայելու եւ ոչնչացնելու «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման սպառնալիքը:

«Միացյալ Նահանգները պատասխանատվության կենթարկի բոլոր նրանց, ովքեր վնասում եւ սպառնում են ամերիկացիներին»,-ասված է Պետդեպի տարածած հաղորդագրության մեջ:

Նշենք, որ օրեր առաջ սիրիական լրատվամիջոցները հայտնել էին, որ Սիրիայի եւ ԱՄՆ-ի միացյալ ուժերը հարձակման են ենթարկվել Պալմիրայի շրջանում:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ռուսական կողմը ուրախ կլինի հյուրընկալել Հայաստանին եւ Ադրբեջանին՝ խաղաղության պայմանագրի ստորագրման համար, «ՌԻԱ Նովոստիին» ասել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրեն Միխայիլ Կալուգինը:

«Այսօր Բաքուն եւ Երեւանը երկխոսություն են վարում հիմնականում անմիջականորեն, առանց միջնորդների: Երկու հանրապետությունների արտաքին գործերի նախարարները նախաստորագրել են Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի տեքստը: Հաշվի առնելով ռուսական կողմի եւ անձամբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի ներդրումը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում, մենք ուրախ կլինենք մեր գործընկերներին հյուրընկալել մեր հարթակում՝ վերջնական փաստաթուղթը ստորագրելու համար», - ասել է նա:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԽԱԲԵԼ, ԳՈՒՄԱՐ ԵՆ ՇՈՐԹԵԼ

Վերջին շրջանում գեղծարարությունները, որոնք կապված են համացանցում ցուցաբերած անփութության հետ, շատացել են: Սակայն առավել ցայտուն կան ու մնում են անհատների կողմից իրականացված «հանցագործությունները», որոնք, բազմաթիվ բողոքներին զուգահեռ, մնում են անպատիժ:

ArmLur.am-ի խմբագրություն ահազանգած քաղաքացի Մ. Թ.-ն պնդում է, որ List.am կայքի միջոցով իրեն խաբել են եւ շորթել գրեթե 200 հազար դրամ գումար:

«Օգոստոսի վերջին տուն ենք գտնում List.am-ով: Մեզ ուղարկում են նկարներ, վիդեոներ: Ասում են, որ այս պահին ապրում են Լոռու մարզում եւ չեն կարող գալ, հենց այդ օրը տունը ցույց տալ: Ասում են՝ եթե հաստատ որոշել եք՝ նույն տունն է, ոչ մի տարբերություն չկա, կարող եք կանխավճար տալ, մենք հայտարարությունը (տան) List.am-ից կջնջենք:

Մեզ շտապ վարձով բնակարան էր պետք, դրա համար 190 հազար կանխավճար տվեցինք ու պայմանավորվեցինք, որ 2 օրից կգան, տունը ցույց կտան»,- պատմում է քաղաքացին:

Գումարը ստանալուց հետո Հայկ Թումանյան անուն-ազգանունով քաղաքացին, որը ներկայանում էր որպես տան սեփականատեր, 2 օր անց վարձակալության համար դիմած Մ. Թ.-ին հայտնել է, որ աշխատավայրում խնդիրներ կան: «Թող մնա՝ կինս կգա, ցույց կտա»,- ասել է նա: Ապա կինը զանգահարել է եւ հայտնել, որ բալիկը հիվանդ է, նա էլ չի կարող գալ:

Մ. Թ.-ին եւ ամուսնուն նման կերպ գրեթե 15 օր խաբել են, որից հետո վերջիններս որոշել են գումարը հետ պահանջել եւ հրաժարվել բնակարանը վարձակալելուց: Հայկ Թումանյանը սկսում է զանգերին չպատասխանել եւ անհետանում է:

Մ. Թ.-ն եւ ամուսինը որոշում են այլ եղանակներ փնտրել տան տերերի հետ կապվելու եւ հեռախոսահամարը որոնում են Getcontact հավելվածի միջոցով. այստեղ էր «անակնկալը»: Հայկ Թումանյանի հեռախոսահամարը գրանցված է լինում «Հայկ խաբեբա»: Նույն համարով եւ անունով գրանցված անձը բնակարաններ է վաճառել Երեւանի տարբեր հատվածներում. սա դառնում է կասկածի պատճառ եւ Մ. Թ.- ն դիմում է ոստիկանություն: Այնտեղ պարզվում է, որ Հայկ Թումանյանի կինն Արցախից է, իսկ տունը, որը առաջարկվել է զույգին վարձակալության համար, գտնվում է Արցախում:

Մ. Թ.-ն ArmLur.am-ին պատմել է, որ ոստիկանությունում պարզվել է՝ նրանց (Հայկ Թումանյանի եւ կնոջ) վերաբերյալ 1 տասնյակից ավելի դիմումներ կան: Տարբեր անձանցից շորթել են 80 հազար եւ ավելի դրամներ: Երբ այս մասին ֆեյսբուքյան տարբեր խմբերում բարձրաձայնել է զույգը, արձագանքներից հասկացել են, որ Հայկ Թումանյանից եւ վերջինիս կնոջից բազմաթիվ անձինք են տուժել:

Ֆեյսբուքյան խմբերում այդ հայտարարությունը տեսել էին նաեւ Հայկ Թումանյանը եւ կինը՝ Մարիամ Գրիգորյանը, որից հետո կապվել էին Մ. Թ.-ի եւ ամուսնու՝ Գ. Շ.-ի հետ՝ նրանց ուղարկելով սպառնալիքներ, որ նրանց եւ նրանց հարազատների նկարները կհայտնվեն Tik Tok-ում՝ վատ գրվածքներով:

ArmLur.am-ը Քննչական կոմիտեից փորձեց տեղեկանալ, թե հաղորդումն ինչ ընթացք է ստացել. խոստացան հնարավորինս շուտ պատասխանել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ, ԶԻՆԱՄԹԵՐՔ

Հասարակական անվտանգության նոր երաշխավոր Ոստիկանության գվարդիան ավելի քան մեկ ամիս է իրականացնում է հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման՝ իրեն վերապահված լիազորությունները՝ կիրառելով առավել հասցեական եւ թիրախային գործիքակազմ:

Գվարդիայի կարգախմբերը հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման իրենց գործառույթներն իրականացնելիս նաեւ իրավախախտումների, հանցագործությունների դեպքեր են կանխարգելում ու բացահայտում:

Դեկտեմբերի 5-ին՝ ժամը 20:20-ի սահմաններում, Գվարդիայի, Համայնքային ոստիկանության Կոտայքի բաժնի, Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության եւ Պարեկային ծառայության Կոտայքի գումարտակի ծառայողները համատեղ ուժեղացված ծառայության ընթացքում Աբովյանի եկեղեցու հետնամասում զենք-զինամթերք են հայտնաբերել:

Մեկնած օպերատիվ խումբը նշված տարածքում հայտնաբերել է ողորկափող հրացան, տարբեր տրամաչափի 272 փամփուշտ, Ֆ-1 նռնակ եւ պահեստատուփեր:

ՍԱՀՄՌԿԵՑՈՒՑԻՉ ԴԵՊՔ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Դեկտեմբերի 16-ին սպանություններ են տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 10:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Շիրակի մարզի քրեական վարչությունում հերթական օպերատիվ տեղեկություններն են ստացվել, որ Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի տներից մեկում դիեր կան:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել է Շիրակի մարզի քրեական ոստիկանության օպերատիվ խումբը՝ վարչության պետի պաշտոնակատար Արթուր Ֆիշյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Մարտիրոսյանի գլխավորությամբ:

Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է:

Ոստիկաններն ու պարեկները նշված սեփական տանը հայտնաբերել են ամուսինների դիերը:

Հոգեբուժական կենտրոնում հաշվառված 37-ամյա որդին սեփական տանը կյանքից զրկել է իր ծնողներին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՀՀ-Ն ՈՒ ԱՄԷ-Ն ԿՃԱՆԱՉԵՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Ազգային ժողովը դեկտեմբերի 16-ին գումարած արտահերթ նիստում քննարկել է ««Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման եւ փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը:

ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի տեղեկացմամբ համաձայնագիրը ստորագրվել է 2025 թ. սեպտեմբերի 30-ին՝ Աբու Դաբիում: Նախատեսվում է, որ փոխըմբռնման հուշագիրը կկարգավորի Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների վարորդական վկայականների հետ կապված իրավահարաբերությունները:

Զեկուցողի տեղեկացմամբ, հուշագրի կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է մյուսի կողմից այն քաղաքացիներին տրամադրված վավեր վարորդական վկայականը, որոնք ժամանում են ոչ բնակության նպատակով՝ պայմանով, որ վարորդական վկայականի տնօրինողը բավարարում է հուշագրի 2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակով նախատեսված՝ վարորդական վկայականների տարբեր կարգերի կապակցությամբ մյուս կողմի սահմանած նվազագույն տարիքի հետ կապված պահանջները:

ՉԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Դեկտեմբերի 15-ին Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ չվերթի ժամանումից հետո ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել 26-ամյա մի օտարերկրացի, որը 2024 թվականի ապրիլի 17-ից հետախուզվում էր Մոլդովայի Հանրապետության Քիշնեւի Ինտերպոլի կողմից երթեւեկության կանոնների խախտման մեղադրանքով. խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նրա հայտնաբերման մասին տեղեկացվել է Հայաստանում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյին եւ Դատախազությանը:

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՆՅՈՒԹ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Հովտամեջ գյուղի բնակիչ 56-ամյա տղամարդը իր բնակության հասցեում ապօրինի թմրամիջոց է պահում:

Դեկտեմբերի 12-ին նշված հասցե մեկնած Համայնքային ոստիկաններին 56-ամյա տղամարդը հայտնել է, որ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ տան բակից հայտնաբերվել է 450 գրամ կանեփի չորացված զանգված: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 12-ից 15-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 223 դեպք, որից 13-ը՝ նախկինում կատարված:*

ԱՄԵՆԱՄՅԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Քաղաքական յոգա՝ 2026-ին. ինչպես մնալ առաջին շարքերում. հորոսկոպ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյան

Մահվան նախարարի պիտակով առողջապահության նախկին նախարարը, որի պաշտոնավարման ժամանակ հազարավոր մարդիկ մահացան Քովիդից ու պատերազմի հետեւանքով, շարունակում է իր անպատիժ հաղթարշավը: Արսեն Թորոսյանը, կոռուպցիոն մի քանի գործերում որպես վկա ներգրավված լինելով, հաջողությամբ կարողանում է քննիչ-դատախազներին ծաղրել, քննադատել, վատաբանել եւ մնալ առաջին շարքերում: Այս բացառիկ տաղանդը գնահատեց նաեւ Նիկոլ Փաշինյանը, ով նախկինում մերժել եւ մեկուսացրել էր Արսեն Թորոսյանին, իսկ Ալեն Սիմոնյանն էլ ԱԺ-ում հեռու, մութ ու ցուրտ մի սենյակ էր տրամադրել՝ որպես ԱԺ պատժված պատգամավորի գրասենյակ: Աստղերը հուշում են Արսեն Թորոսյանին կոռումպացված շրջապատով իրականացվող քայլերը զգույշ անել, մտածել հետեւանքների մասին, քանի որ ոչ մի իշխանություն հավերժ չէ, իսկ գործած արարքների վաղեմության ժամկետը Փաշինյանի իրավաբանների օրոք վերջ չունի: 2026-ը երկվորյակ Արսեն Թորոսյանի համար խոստումնալից, է, եթե կարողանա փրայմերիզը հաղթահարել, ցուցակում լավ տեղ զբաղեցնել՝ դրա համար պատրաստ լինելով անգամ Նիկոլ Փաշինյանի հետ աղոթքի գնալ՝ իր աթեիստ տեսակով:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Աթոռի մարզական երթուղին. հեծանիվ, աղոթք եւ քաղաքական ֆիթնես. նախարարի հորոսկոպը ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան

ՀՀ վարչապետի հետ աղոթքի գնացող նախարարը, որի ամուսինը կրոնական «ՌԵՄԱ» կազմակերպության քարոզիչ է, հանուն աթոռի պատրաստ է ամեն զոհողության: Պետք է՝ լողորդ կդառնա, պետք է՝ բասկետբոլ կխաղա, հեծանիվ կքշի, միայն թե նախարարի աթոռը պահպանի: Ոչինչ, որ առողջապահության ապահովագրության համակարգը ձախողել է, ոչինչ, որ չի կարողանում բուժհաստատություններում առկա խնդիրները լուծել, եւ պետպատվերը տարվա կեսից հետո ավարտվում է, որ նորածինների մահվան դեպքերը աղաղակող են, որ մարդիկ վիրահատության փող չունեն... Գլխավորը՝ վարչապետի կողքին կանգնելն է, որ կարողանա ամուսնու ընկերությունների հետ նախարարության գնումների մրցույթներ կազմակերպել, հարստանալ, որ 3200 դոլարանոց պայուսակ բռնել կարողանա: Լեւոն Տեր-Պետրոսյանի կնոջ ընկերուհու աղջիկը հաջողությամբ մոռացել է անցյալն ու առաջին նախագահին. «մեռելի զդաչի», «գիտնական ոջիլ» եւ այլ արտահայտություններ անող Աննա Հակոբյանի եւ նրա ամուսնու բոլոր քայլերի հետ նախարար Ավանեսյանը հաշտ է: Անցնող տարում էլի չմոռացվեց Աբովյանի դիահերձարանում՝ գետնին՝ տոպրակների մեջ լցված մեր զինվորների դիակների ու ոսկորների հարցը... Դա կմնա խարան Անահիտ Ավանեսյանի ճակատին մինչեւ կյանքի վերջ: Աստղերը հուշում են աքլորի տարում ծնված նախարարին լինել ավելի հանգիստ, հետեւել ոչ միայն ֆիզիկական, այլեւ հոգեւոր առողջությանը, որպեսզի տուրբուլենտային վիճակը խաղաղվի մինչեւ 2026-ի ընտրությունների արդյունքներ: Իսկ դրանից հետո դժվար թե նախարարական հաղթարշավը շարունակական լինի, աստղերը հորոսկոպով խոյ նախարարի համար այդ առումով լավ կանխատեսումներ չունեն:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Երբ մրցաշարերն են պահում աթոռը. նախարարի հումորային հորոսկոպը Կրթության, գիտության, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Ժաննա Անդրեասյան

Հորոսկոպով ջրհոս, բազմաֆունկցիոնալ նախարարի համար անցնող տարին տուրբուլենտային էր. վարչապետի հետ բոլոր մրցաշարերին մասնակցելը օգնեց պահել պաշտոնը, սակայն նրա կողմից երաշխավորված շատ բարձրաստիճան պաշտոնյաներ կոռուպցիոն խայտառակ գործարքների մեջ թաթախվեցին՝ ստվերելով նրա հեղինակությունն ու վստահությունը: Ընկերուհու հետ 50 մլն դրամանոց պայմանագիրն էլ շարունակում է մնալ օդում կախված վտանգ: Աթոռը պահպանելու հարցում դեռ ամուսնու հանրային ակտիվությունն է օգնում, բայց 2026-ից հետո ամեն ինչ կարող է գլխիվայր շուռ գալ. հարցաքննություններ, բացատրություններ եւ ի վերջո՝ հրաժեշտ:

Աստղերը հուշում են աքլորներին լինել առավել զգոն, շարունակել պասիվանալ շատ հարցերում եւ գրավել պաշտպանվողական դիրք՝ մինչեւ վտանգները չեզոքանան, եթե հաջողվի հասնել այդ արդյունքին:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Ժոլտա՛, ինքնուրույնություն մի՛ ցուցաբերիր եւ կառավարի՛ր. տարվա սատիրիկ ուղեցույցը ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան

Մշտաժպիտ, երջանիկ, բախտավոր մարդու իմիջ ունի մեր երկրի թիվ մեկ ֆինանսիստի պաշտոն զբաղեցնողը: Նա կարողացավ 1 մլն դոլար վարկ ստանալ՝ առանց տոկոսի, առաջ տանել իր բիզնեսները, շարունակել հաջողությամբ դրանք համատեղել բարձր պաշտոնի հետ եւ վայելել կյանքը. վարույթն էլ թող քննիչները քննեն ու քննեն: Ոչինչ, որ բյուջեի թվերը իրար չեն համապատասխանի, որ երկիրը թաղված է պարտքերի մեջ, որ անգամ սեփական հայտարարագիրը սխալներով եք լրացնում: Գլխավորը՝ Նիկոլ Փաշինյանի մոտ հեզիկ կերպարը պահելն է, որ հանկարծ «շեֆը չբարկանա»:

Աստղերը կապիկի տարում ծնված նախարարների համար հուշում են կուսակցական ակտիվությունը բարձրացնել, որ հնարավոր լինի ապագայում ՔՊ-ի քաղաքական արեւի տակ դիրք ունենալ:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Երբ նախկինն էլ կարող է լինել հեղափոխական. Տիգրան Խաչատրյանի 2026-ի ուղեցույցը. ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյան

ՀՀԿ-ի օրոք ֆինանսների նախարարի եւ այլ պաշտոններ զբաղեցրած փոխվարչապետը, որ ղեկավարում է մարզային սուբվենցիոն ծրագրերը, անցնող տարում աչքի է ընկել մերժումներով. ում, երբ, ինչ փաստաթուղթ պետք է՝ եթե հասավ Խաչատրյանին, քնում է դարակի վրա կամ համակարգչում:

ՔՊ-ում նրա նկատմամբ էլ կա տոտալ անվստահություն եւ տարակուսանք, թե ինչպես կարող է «նախկինը» այսքան «ներկա» լինել եւ շարունակել մնալ հեղափոխական թիմում: Աստղերը հուշում են աղեղնավոր Տիգրան Խաչատրյանին շարունակել ինքնուրույնության բացակայությամբ աչքի ընկնել, որպեսզի երկարակեցությունը հնարավոր լինի ապահովել: Տարին կլինի բարենպաստ՝ կախված Փաշինյանի տրամադրությունից:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Քննչական անցյալից՝ քաղաքական աղագա. Գալյանի խաղը 2026-ի աստղերի հետ ՀՀ արդարադատության նախարար Արբուհի Գալյան

Դատախազությունից ՔՊ քաստինգով անցած, նախարար դարձած գեղեցկուհին ամրացրել է իր դիրքերը գործադիրում: Քննչական անցյալը օգնել է նրան առավել լավ ճանաչել մարդկանց ու ճիշտ կողմնորոշվել՝ ում հետ, երբ, ինչ հարաբերություն կառուցել: Չնայած երկու տասնայկից ավելի ինքնասպանության ու մահվան դեպքեր գրանցվեցին ՔԿՀ-ներում՝ Գալյանը շարունակում է ձիգ մնալ իր տեղում՝ միայն մտահոգվելով իր վատ գովազդով, որի արդյունքներից դժգոհ է: Սկանդալները ուղեկցեցին 2025-ին, բայց 2026-ը Գալյանի համար չի խոստանում անկումային լինել, եթե արտառոց կամ արտակարգ գործընթացներ չլինեն:

Աստղերը հուշում են կապիկի տարում ծնվածներին լինել առավել նախաձեռնող եւ ակտիվ, որպեսզի մրցավազքում՝ հատկապես դատախազության նախկին գործընկերների հետ, հնարավորություն ունենաք չպարտվելու:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

Աստղերը հուշում են չերեւալ, բայց որոշել ամեն ինչ. փոխվարչապետի աստղագուշակը ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյան

Համեստ, չերեւացող, բայց Կառավարության ամենաազդեցիկ դեմքերից մեկն է Մհեր Գրիգորյանը, որը անցնող տարում կարողացավ հաջող բանակցել ինչպես ռուսների, եվրոպացիների, այնպես էլ՝ ադրբեջանցիների հետ, որի մասով Նիկոլ Փաշինյանը լուրջ առարկություններ չի ներկայացրել:

Աստղերը հուշում են, որ ջրհոս փոխվարչապետի գաղտնի կերպարը անհանգստացնում է «Քաղաքացիական պայմանագրի» վերնախավին, ովքեր համարում են, որ Գրիգորյանը պետք է հեռանա Փաշինյանի կաբինետից: Սակայն ինքը՝ Փաշինյանը, վստահում է Գրիգորյանին, եւ չլինելով կուսակցական կերպար՝ շարունակում է նրան պահել իր կողքին:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 31 պատահար, 1 մարդ մահացել է, 28-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՈՍԿՈՒ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻՑ»

«Հայէկոնոմբանկն» առաջարկում է ձեռք բերել շվեյցարական Argor-Heraeus եւ Valcambi ընկերությունների 999.9 հարգի ոսկու ստանդարտացված ձուլակտորներ՝ 1, 2, 5, 10, 20, 50 եւ 100 գրամ կշիռներով:

Ստանդարտացված ձուլակտորը կարող է լինել կայուն ներդրման լավագույն տարբերակ, ինչպես նաեւ ներկայանալի նվեր՝ ցանկացած առիթի համար:

Ոսկու ձուլակտորներ կարող եք ձեռք բերել «Հայէկոնոմբանկի» գլխամասային գրասենյակից եւ մասնաճյուղերից:

Գործող սակագներին կարող եք ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում:

86 86 | aeb.am

«Հայէկոնոմբանկը» վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՃԱՊՈՆԻԱՆ ԿԿՈՐՑՆԻ ԲՈԼՈՐ ՊԱՆԴԱՆԵՐԻՆ

Հաջորդ տարվա հունվարին Ճապոնիան, 1973 թվականից ի վեր առաջին անգամ, կզրկվի իր կենդանաբանական այգիներում եղած բոլոր պանդաներից՝ Չինաստանի հետ հարաբերությունների սառեցման պատճառով: Այս մասին հայտնում է «Կիոդո» գործակալությունը:

Ճապոնիայում մնացած վերջին հսկայական պանդա-երկվորյակները՝ արու Սյաո-Սյաոն եւ էգ Լեյ-Լեյը, որոնք գտնվում են Տոկիոյի «Ուենո» կենդանաբանական այգում, պետք է վերադարձվեն Չինաստան հունվարին, քանի որ փետրվարին լրանում է Չինաստանից նրանց վարձակալության ժամկետը:

Հունիսին Ճապոնիան Չինաստանին է վերադարձրել Վակայամա պրեֆեկտուրայի «Արկածների պարկի» 4 պանդաներին: Դրանից հետո երկրում մնացած միակ պանդաները դարձել են «Ուենո» կենդանաբանական այգու երկվորյակները:

Տոկիոն եւ Պեկինն այժմ հարաբերությունների սառեցման շրջան են ապրում՝ Ճապոնիայի վարչապետ Սանաե Տակաիչիի այն հայտարարությունից հետո, թե Թայվանի շուրջ ստեղծված անկանխատեսելի իրավիճակը, «եթե այն ուղեկցվի ռազմանավերի եւ ռազմական ուժի կիրառմամբ, ինչպես էլ նայենք, կարող է դիտարկվել որպես էկզիստենցիալ ճգնաժամ»

Ի պատասխան դրան՝ Օսակայում Չինաստանի գլխավոր հյուպատոս Սյուե Ցզյանը X սոցիալական ցանցի իր էջում գրել է. «Ոչինչ չի մնում, քան առանց մի վայրկյան վարանելու կոտրել այդ կեղտոտ վիզը, որն առանց հարցնելու խցկվել է (ուրիշի գործերին): Դուք պատրա՞ստ եք դրան»: Հետագայում գրառումը հեռացվել է:

Team Telecom Armenia

ՎԱՃԱՌՔԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ՝ ԲԱԳՐԱՏԱՇԵՆՈՒՄ

Team Telecom Armenia-ն, շարունակելով ընդլայնել իր վաճառքի եւ սպասարկման կենտրոնների ցանցը Հայաստանում, հերթական կենտրոնն է բացել Տավուշի մարզում՝ Բագրատաշենում (հասցե՝ Բագրատաշեն՝ 15-րդ փողոց, 65): Team-ի նոր մասնաճյուղը բաց է ամեն օր՝ 09:00-20:00-ն:

Հայաստանի եւ Վրաստանի սահմանում տեղակայված վաճառքի եւ սպասարկման կենտրոնի այցելուները հնարավորություն ունեն մեկ վայրում ձեռք բերելու Team-ի ծառայությունների ամբողջական փաթեթը՝ բջջային կապ, ինտերնետ ծառայություններ, ինչպես նաեւ ծանոթանալու նորագույն սարքավորումների եւ աքսեսուարների լայն տեսականուն: Սպասարկող թիմը պատրաստ է արագ եւ անհատական մոտեցմամբ աջակցելու բոլոր հաճախորդներին՝ օգնելով ընտրել իրենց կարիքներին համապատասխան ծառայություններ ու սարքավորումներ:

«Ամեն օր մեր հաճախորդներին ավելի մոտ լինելն ու ծառայությունների տրամադրման հարմարավետությունն ապահովելը մեր աշխատանքի հիմքում է: Այս նոր կենտրոնի տեղակայումը հնարավորություն կտա ոչ միայն համայնքի բնակիչներին ապահովել մեր ծառայություններով եւ սարքավորումներով, այլեւ հարեւան Վրաստանից Հայաստան այցելող մեր հյուրերին եւ Վրաստան մեկնող մեր հայրենակիցներին՝ անմիջապես սահմանին տրամադրելով կապի ծառայությունների ամբողջական փաթեթ, ռոումինգ եւ անհրաժեշտ կարգավորումներ»,-ասում է Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը:

Վաճառքի եւ սպասարկման նոր կենտրոնի բացմամբ Team-ի մասնաճյուղերի քանակը ամբողջ Հայաստանում հասել է 80-ի: Դրանց հասցեներին եւ աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ կայքէջում:

Team Telecom Armenia-ի մասին

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

Հասարակայնության հետ կապերի բաժին՝ pr@telecomarmenia.am.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԴԻ ՈՐԱԿԸ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է

Երեւանում վերջին օրերին օդի որակի էական բարելավում է արձանագրվել. հյուսիսային քամու ներթափանցման արդյունքում փոշու ցուցանիշները հասել են ամառային ցուցանիշների մակարդակներին:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում հայտնեց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

«Տարածաշրջան է ներթափանցել հյուսիսային քամի, որի արդյունքում արձանագրվել է օդի որակի զգալի բարելավում: Բարելավումն այնքան էական է, որ համադրելի է ամառային ցուցանիշների հետ: Դեկտեմբերի 14-ի առավոտյան PM 2.5-ի ցուցանիշը կազմում էր շուրջ 30, Դեկտեմբերի 15-ին՝ 65,8:

Միեւնույն ժամանակ Հայկազյանը նշել է, որ շարունակաբար ներկայացվում է օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընդգծելով, որ ստեղծված իրավիճակը պայմանավորված է ինչպես մարդածին, այնպես էլ բնական գործոններով:

«Առաջիկա ավագանու նիստում երկու որոշումների շրջանակում նախատեսում ենք ներկայացնել լրացուցիչ փոփոխություններ՝ ուղղված մարդածին աղբյուրներից արտանետումների նվազեցմանը: Դրանց համաձայն՝ հավելյալ սահմանափակումներ կկիրառվեն շինհրապարակների նկատմամբ, ինչպես նաեւ պարտադիր բարեկարգման նորմերը կդառնան կիրառելի նաեւ հանքավայրերի համար»,- նշեց նա:

TRIPP ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Մոսկվան պատրաստ է խորհրդակցել Երեւանի հետ «Թրամփի ուղի» նախաձեռնության պարամետրերի եւ դրանում Ռուսաստանի հնարավոր մասնակցության վերաբերյալ:

Ինչպես հայտնում է ՌԻԱ Նովոստի-ն, այդ մասին ասել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրեն Միխայիլ Կալուգինը:

«Հայ-ամերիկյան նախագծի մանրամասները դեռ պետք է ուսումնասիրվեն: Մենք պատրաստ ենք խորհրդակցել մեր հայ գործընկերների հետ՝ քննարկելու ինչպես նախաձեռնության պարամետրերը, այնպես էլ Ռուսաստանի հնարավոր մասնակցությունը»,-ասել է նա:

Կալուգինը նաեւ կարծիք է հայտնել, որ այդ նախագծում Ռուսաստանի մասնակցության համար կան բավարար հիմքեր:

«Մեր ընկերությունը՝ «Հարավկովկասյան երկաթուղիներ»-ը, որը «Ռուսական երկաթուղիներ»-ի դուստր ձեռնարկությունն է, ունի Հայաստանի երկաթուղային ցանցի կառավարման կոնցեսիա: Տարածաշրջանն օգտագործում է ռուսական երկաթուղային գծերը», - նշել է Կալուգինը:

Նա նշել է, որ «Թրամփի ուղի»-ն մեծ մասամբ անցնելու է ռուսական սահմանապահների պատասխանատվության տարածքով:

«Մենք պետք է հաշվի առնենք նաեւ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Ակնհայտ է, որ մեր գործընկերները չեն կարող առանց Ռուսաստանի», - ասել է ռուս դիվանագետը:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Վաշինգտոնում օգոստոսի 8-ին ստորագրել են հռչակագիր, որի 4-րդ կետով, մասնավորապես, սահմանվում է.

«Հայաստանի Հանրապետությունն աշխատելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ փոխադարձաբար համաձայնեցված երրորդ կողմերի հետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» («Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP)) հաղորդակցության ծրագրի իրականացման շրջանակը սահմանելու նպատակով:

Ավելի ուշ ՀՀ վարչապետը ԱԺ-ում հայտարարեց, որ «Թրամփի ուղու» շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2026 թվականի երկրորդ կեսին:

«Մինչեւ այս տարվա վերջ թղթի վրա պետք է նկարագրենք բոլոր մանրամասները: 2026 թվականի առաջին կեսին պետք է համաձայնեցնենք, իսկ երկրորդ կեսին պետք է սկսենք շինարարական աշխատանքները: Սա է պլանը»,-ասել էր վարչապետը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՕՐԵՆՔ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՏՈՄՄԵՐԸ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը երեկ հաստատել է «Թանգարաններում էլեկտրոնային տոմսերի միասնական ավտոմատացված համակարգի ստեղծում, ներդրում եւ սպասարկում» ծրագրի արդիականացման եւ լավացման փաթեթը: Ըստ այդմ՝ համակարգին կմիանա եւս 18 մասնաճյուղ-թանգարան՝ համապատասխան սարքավորումներով:

«Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկացավ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից: ԿԳՄՍՆ-ից նշում են, որ արդյունքում ամբողջական կդառնան տոմսային տնտեսությանը միացած կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ենթակայության թանգարանները:

Դեռեւս 2023 թվականի նոյեմբերին նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում ներդրվել է «Թանգարաններում էլեկտրոնային տոմսերի միասնական ավտոմատացված համակարգի ստեղծում, ներդրում եւ սպասարկում» ծրագիրը: Համակարգը կազմված է 2 հիմնական բաղադրիչներից՝ տոմսերի վաճառք, մուտքի հասանելիության վերահսկում եւ կառավարում:

Ծրագրին միացած է նախարարության ենթակայության 19 թանգարան:

Յուրաքանչյուր քաղաքացի կարող է museumsarmenia.am կայքից ստանալ համապարփակ տեղեկատվություն թանգարանի, գործող ծրագրերի, ցուցադրությունների եւ ընթացիկ միջոցառումների մասին, ինչպես նաեւ էլեկտրոնային հարթակի միջոցով պատվիրել իրեն հետաքրքրող ցուցադրության տոմսը՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Հարթակի միջոցով ավելի հասանելի կդառնա հուշանվերների վաճառքը, քաղաքացիները հնարավորություն կունենան գնելու մի քանի տոմս միաժամանակ եւ օգտվելու զեղչային քաղաքականությունից:

Նախարարությունը նշում է, որ ծրագրի իրականացումը թույլ է տալիս վերահսկել թանգարանների կողմից տոմսերի վաճառքը, թանգարանների եկամուտները եւ ապահովել հաշվետվողականություն պետության եւ հանրության առաջ, ինչպես նաեւ ապահովել ֆինանսական հոսքերի միասնական հաշվառում, հաշվետվություն: Ծրագիրը թանգարանային համակարգը դարձնում է ավելի արդյունավետ, հաշվետու ու զարգացող:

Նախարարության ենթակայությամբ գործող բոլոր թանգարանների տոմսերը հնարավոր է ձեռք բերել նաեւ օնլայն:

Հավելենք, որ քաղաքացիների, հատկապես երիտասարդների առումով էլեկտրոնային տոմսերի ձեռքբերման համակարգը բավականին հեշտ, արագ եւ մատչելի հնարավորություն է, սակայն այս տարբերակը մտահոգիչ է տարեցների առումով. ինչպե՞ս են բարդ կայքերից օգտվել կարողանալու եւ էլեկտրոնային տոմսեր ձեռք բերելու ՀՀ կենսաթոշակառու քաղաքացիները:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ՉԻՆԱՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը «Արեւիկ գրատանը» ներկա է եղել չինարենից հայերեն թարգմանությունների շնորհանդեսին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ Դանիել Դանիելյանը ողջունել է ներկաներին եւ նշել, որ ԿԳՄՍ նախարարության եւ ՉԺՀ ազգային մամուլի եւ հրատարակչության վարչության միջեւ դասական ստեղծագործությունների թարգմանության եւ հրատարակման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրով նախատեսված աշխատանքները շարունակվում են:

«Ըստ հուշագրի՝ յուրաքանչյուր կողմ իր երկրում պետք է թարգմանաբար հրատարակի եւ տարածի մյուս երկրի դասական գրականությունը: Այս գրքերի միջոցով կողմերը ծանոթանում են միմյանց՝ աշխարհի ամենահին, հարուստ քաղաքակրթությունների՝ Հայաստանի եւ Չինաստանի պատմությանը, արվեստին, կրթությանը, գրականությանն ու փիլիսոփայությանը: Փոխադարձ թարգմանությունները նպաստում են նաեւ ճանաչողության զարգացմանը, տվյալ երկրում ճամփորդելու ու նորանոր բացահայտումներ անելու հնարավորությանը»,- նշել է Դանիել Դանիելյանը:

Նախարարի տեղակալը կարեւորել է այն փաստը, որ թարգմանական գործի շարունակականության ապահովման մեջ մեծ է երիտասարդների մասնակցությունը, որը կարեւոր է ծրագրի հետագա զարգացման համար:

«Արեւիկ» հրատարակչությունը ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ լույս է ընծայել Ա Չընի «Ծառերի արքան», Ցաո Յուի «Ամպրոպ», Յու Հուայի «Ապրել», Սյա Հոնի «Հուլան գետի պատմությունները», Ծը Թիեշընի «Ես եւ երկրի տաճարը» գրքերը:

Ծրագրի շրջանակում վերջին մեկ տարում հայերենից չինարեն են թարգմանվել եւ հրատարակվել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի», Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի», Մովսես Խորենացու «Հայոց պատմություն», Հովհաննես Թումանյանի «Հեքիաթներ», Գրիգոր Զոհրապի «Պատմվածքներ» երկերը:

Ընդգծվում է, որ սա լայն հնարավորություն է ընձեռում չինացի ընթերցողներին՝ հայ դասական գրականությանը, հայ ընթերցողին՝ չինական գրականությանը, փոխադարձաբար ծանոթանալու:

Նախագիծը չի սահմանափակվում վերոնշյալ գործերով: 2026 թվականին եւ դրան հաջորդող տարիներին, պայմանավորվածության համաձայն, չինարեն լույս կտեսնեն Եղիշե Չարենցի, Վահան Տերյանի, Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, «Սասնա ծռեր» էպոսը, հայ ժողովրդական հեքիաթների ժողովածուն, Ակսել Բակունցի, Ստեփան Զորյանի, Աղասի Այվազյանի պատմվածքները, Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւ», Շիրվանզադեի «Քաոս», Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը», Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» երկերը, հայ ժամանակակից արձակի եւ պոեզիայի անթոլոգիաներ:

ՀՐԱՎԵՐ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՅԻՆ ԽՄԲԵՐԻՆ

Եգիպտոսի մշակույթի նախարարությունը հնությունների եւ զբոսաշրջության նախարարության եւ Ասուանի նահանգապետարանի հետ համատեղ կազմակերպում է Ասուանի մշակույթի եւ արվեստի 13-րդ միջազգային փառատոնը: Այն անցկացվելու է 2026 թ. փետրվարի 3-9-ը:

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, եգիպտական կողմը միջոցառումներին մասնակցելու եւ փառատոնի շրջանակում հայկական մշակույթը եւ արվեստը ներկայացնելու նպատակով հրավիրում է հայկական ազգային պարերի խմբերի:

Հրավիրող կողմը հոգում է մասնակիցների կեցության, սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք), ներքին փոխադրումների ծախսերը, իսկ միջազգային փոխադրումների ծախսերը՝ մասնակիցները: Յուրաքանչյուր խումբ կարող է բաղկացած լինել առավելագույնը 12 անդամից՝ ներառյալ խմբի ղեկավարները: Մասնակցության պարագայում այդ մասին պետք է տեղեկացնել ԿԳՄՍ նախարարության Մշակութային ժառանգության վարչությանը (հեռ.՝ 010-599-699, ներքին՝ 429):

Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2026 թ. հունվարի 20-ն է: Դիմումներն անհրաժեշտ է ուղարկել aswanfestival@gmail.com էլ. փոստին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

Հայաստանի ֆուտզալի ազգային հավաքականն առաջին մարզումն է անցկացրել ուսումնամարզական հավաքի շրջանակներում՝ նախապատրաստվելով ընկերական մրցաշարին:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Հայաստանի ազգային հավաքականը դեկտեմբերի 14-25-ը ուսումնամարզական հավաք կանցկացնի ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայում:

Հավաքին ընդառաջ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռուբեն Նազարեթյանը հրապարակել է խաղացողների ցանկը՝

Ալբերտ Աղաջանով-«ՏՋՄՍ Տուլա»
Լեւոն Գեջուա-«Լիպեցկ»
Արթուր Մկրտչյան-«Սիեւն»
Էմին Ղարաբեկյանց-«Յունիսպորտ»
Արթուր Մելքոնյան-«Լիպեցկ»
Նիկիտա Խռոմիխ-«ՏՋՄՍ Տուլա»
Համլետ Մանուկյան-«Յունիսպորտ»
Վլադիմիր Սանոսյան-«Նորիլսկի Նիկել»
Դենիս Նեւեդրով-«Տյումեն»
Գարիկ Մաշումյան-«Սիեւն»
Արթուր Պատատյան-«Երեւան»
Միհրան Դերմենջյան-«Մերկուրի»
Սարգիս Մարգարյան-«Յունիսպորտ»
Արսենի Պետրոսյան-«Նովայա-Գեներացիա»
Աղասի Եղիազարյան-«Երեւան»
Միքայել Ղանդիլյան-«Էիր-Աերո»
Արսեն Պետրոսով-«Տորպեդո»
Պուտրուս Վասիլեւ-«Յունիսպորտ»

Դեկտեմբերի 20-24-ը կայանալու է միջազգային ընկերական մրցաշարը, որին մասնակցելու են Վրաստանի, Մոլդովայի, Ղրղզստանի եւ Հայաստանի հավաքականները: Հայաստանի ֆուտզալի ընտրանին նախապատրաստվում է Եվրոպայի առաջնությանը:

ՄԱԽԱՉԵՎԻ «ԽՈՐՀՈՒՐԴԸ»՝ ԱՐԱՄ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ

UFC-ի թեթեւքաշային կարգի գործող չեմպիոն Իսլամ Մախաչեւը մեկնաբանել է թեթեւքաշային կարգում ստեղծված իրավիճակը, որտեղ ժամանակավոր տիտղոսի համար կմենամարտեն Փեդի Փիմբլեթը եւ Ջասթին Գեյջին:

«Թող կազմակերպությունը չնեղանա, բայց հիմա ինձ համար ավելի ու ավելի անհասկանալի մենամարտեր են տեղի ունենում: Կարծում եմ՝ Արմանը պետք է մենամարտեր տիտղոսի համար: Բայց Արմանը հիմա չի մենամարտի, կմենամարտեն Փիմբլեթն ու Գեյջին: Ով էլ հաղթի նրանցից, կմենամարտի Իլյա Թոփուրիայի հետ: Սա նշանակում է, որ Արմանը պետք է եւս մեկ տարի սպասի:

Իմ կարիերայում էլ էր այդպես: Ես 10 մենամարտ անցկացրի, որպեսզի հասնեմ տիտղոսին՝ 10 հաղթական մենամարտ: Արմանը, հավանաբար, պետք է մի փոքր սպասի, համբերի», - ասել է Մախաչեւը Red Corner MMA YouTube ալիքին տված հարցազրույցում:

Հիշեցնենք, որ Փեդի Փիմբլեթը եւ Ջասթին Գեյջին կմենամարտեն UFC-ի թեթեւ քաշային կարգի ժամանակավոր գոտու համար UFC 324-ում, որը կկայանա ԱՄՆ-ի Լաս Վեգաս քաղաքում՝ 2026 թվականի հունվարի 25-ին:

● Դեկտեմբերի 20-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Ջավեշտալի կատակերգություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որքան ժամանակ է պահպանվում անձի վարկային պատմությունը: Եվ հետաքրքիր է իմանալ՝ բացի վարկառուից, ով կարող է տեղեկանալ անձի վարկային պատմության մասին:

Սիրանույշ Պետրոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթների՝ «վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն»:

Վարկառուի կողմից տրված գրավոր համաձայնության դեպքում վարկառուի վարկային պատմության մասին կարող են տեղեկանալ վարկառուի մասով դրամական պահանջներ, օրինակ՝ տրամադրված վարկերի մասով դեբիտորական պարտավորություններ ունեցող սուբյեկտները կամ վարկառուի գործատուն աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելիս:

Առանց վարկառուի համաձայնության վարկային բյուրոն կարող է օրենքով նախատեսված դեպքերում տեղեկատվություն տրամադրել Կենտրոնական բանկին, ինչպես նաեւ դատարանին՝ դատական որոշման հիման վրա:

«ԱՔՌԱ» վարկային բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթների՝ «վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն»:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք պետք է անշարժ գույքի պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմումները ներկայացվեն այն սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որի սպասարկման տարածքում գտնվում է դիմումի առարկա անշարժ գույքը:

Ստեփան Տիգրանյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա ՀՀ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Պարույր Սեւակի տուն-թանգարանը հայտարարություն է տարածել այն մասին, որ ամփոփվել են Լ. Թոքմաջյանի քանդակի հեռացման վերաբերյալ անցկացված հարցման արդյունքները:

Համայնքի բնակիչների քվեարկության արդյունքներով՝ 79,9% եւ 20,1% տոկոսային հարաբերակցությամբ, որոշում է կայացվել Ջանգակատան միջնակարգ դպրոցի բակից հեռացնել մի քանի օր առաջ տեղադրված քանդակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 8 - 12 - 1 + 3
Կոտայքի լեռներ	- 7 - 10 - 1 + 2
Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 + 3 + 5
Գեղարքունիք	- 6 - 11 - 1 + 3
Լոռի	- 3 - 8 + 2 + 5
Տավուշ	0 - 3 + 4 + 7
Արագածոտնի լեռներ	- 8 - 12 - 1 + 2
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 6 + 2 + 6

Արարատ	- 2 - 4 + 4 + 7
Արմավիր	- 2 - 5 + 6 + 8
Վայոց ձորի լեռներ	- 8 - 12 - 1 + 3
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 4 + 7
Սյունիքի նախալեռներ	- 3 - 7 0 + 3
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 4 + 8
ԼՂՀ	0 + 3 + 3 + 7
Երեւան	- 1 0 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*